

ՄԵՆՏԱՆԵՐ



“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻՆ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1896


ԹԻՒՆ 9

ՁԻՆՆԻ ԱՐՐՐ ՔԱՆԱՏԱՅԻ ՄԷՁ

Մենք հիմա անցուցած ենք այնպիսի օր մը որ, ինչպէս մայրաքաղաքիս մէկ հին բնակիչը որ սովորութիւն բրած է շարունակ ջերմաչափին նայիլ, կը ըսէ թէ անցած քառասուն տարուանս մէջ կոստանդնուպոլիս ամենէն տաք օրն է: Մինչ կը տանջուինք այս սաստիկ տաքութենէն, հաճելի է մտածել ձմեռուան ցուրտին և ձիւնին վրայ: Քանաւայի մէջ և Միացեալ Նահանգաց զանազան կողմերը շատ անգամ ձիւնը այնքան խորունկ կ'ըլլայ որ երկաթուղոյ կառուցումները կը կայնեցնէ: Այս պատկերը կը ցուցնէ թէ վայրաշարժները ինչպէս ճամբայ կը բանան դիզուած ձիւներուն մէջէն: Հոս կը տեսնէք իրարու կապակցուած շորս վայրաշարժներ, և ամենէն տուաջը գանուողը իր առջև ունի Չեան արօր կոչուած գործիք մը որ սուր բերան մը ունի ձիւնը կտրելու համար: Մենք վեց իրարու կապակցուած վայրաշարժներ տեսած ենք երկաթուղոյ մը վրայ, որոնց ամենուն միացեալ ոյժով յառաջ կը վազէ կառախումբը: Երբեմն ձիւնը այնպէս խորունկ կ'ըլլայ որ կառախումբը կը կեցնէ, այն ատեն կառախումբը բաւական ետ կ'երթայ, և յետոյ նորէն յառաջ կը վազէ և ձիւնին մէջ կը մանէ: Անգամ մը տեսանք որ արօրը երկաթուղոյ կայարանին շէնքին տանիքին վրայ կը նետէր ձիւնը:

ՁԻՆՆԻ ԱՐՐՐ

Թումիկ գէշ տղայ մը չէր, և իրօք վարժապետը դպրոցին ամենէն աղէկ



տղոցը կարգը կը դասէր: Ծուռ և սխալ բաներ ունէր, բայց անոնց վրայ պիտի չխօսիմ ձեզի: Օր մը վարժուհիին անհնազանդութիւն ըրաւ: Թէ ինչ բանի մէջ էր անհնազանդութիւնը, հարկ չէ ըսել: Հետեւեալ առաւօտ վարժուհին աւոր վրայ փոխանակ ժպտուն դէմքի և զուարթ բարեւի, տեսաւ միայն աճապարանք և դէպ ի վար նայուածք: Աղօթքէն ետքը Թումիկ դասաւանջութեան սրահը զրկուեցաւ որպէս զի մտածէր և որոշէր թէ ինչ ընելու էր: Դատը պիտի չըսէր մինչև որ շորտէր

ընելիր: Թումիկ մտածեց. «Գիտէր թէ յանցաւոր էր: Կը ցաւէր, վասն զի կը սիրէր վարժուհիին և քիչ անգամ պատժուած էր. բայց վարժուհիին կը զգար թէ անոր յանցանքին աչք խփել չէր ըլլար: Կարճ էջանին ըսաւ: «Ի՞նչ ընելու ենք, տղաս?» «Չեմ գիտեր, վարժուհի», պատասխանեց Թումիկ: «Ի՞նչ շատ ծուռ բան բրի, և կը ցաւիմ?» «Գիտեմ որ կը ցաւի», ըսաւ վարժուհիին, «և չեմ ուզեր պատժել քեզ, բայց չեմ գիտեր ինչ ընելու եմ: Դուն գիտե՞ս?» «Ո՛րիորդ, սա գիտեմ որ պատժի արժանի եմ»: «Ի՞նչ պիտի

ընենք, տղաս :” “ճիշդ ինչ որ կ'ըսես, վարժուհի :” “կ'ուզե՞ս որ կերպով մը տղոցը բռնա ինչ որ բարի ինձի :” “կ'ուզեմ :” ըսաւ թումիկ անձկանօք : “կը գրե՞ս զայն տախտակին վրայ, թէ բերնով կ'ըսես :” “Ես աւելի կ'ուզեմ գրել, վարժուհի :” ըսաւ թումիկ : Այսպէս երկուքը միասին, թումիկ և վարժուհին, դպրոցին սրահը գացին . և սև տախտակին վրայ, վար-

երը լինցոց գրելը . գնաց դասարանը, և թողուց որ սև տախտակը ըսէ իր պատմութիւնը, և սա էր գրածը .

«Ես անհնազանդութիւն բրի երէկ իմ վարժուհիս, կը ցաւիմ, և պիտի ջանամ ազագային մէջ անոր խօսքը մտիկ ընել :”

ԹՈՎՄԱՍ

Այն ատեն վարժուհին ըսաւ . «Գիտեմ որ ամէնըդ ալ աշնուարար պիտի


Յաջորդ առաւօտը թումիկ վախէն դողալով դպրոց գնաց, մտքէն չէր ելլեր պատին վրայ գրածը : Չնայեցաւ անգամ սև տախտակին վրայ մինչև որ գանգակը հնչեց և վարժուհին ըսաւ, «Ես աւրեցի երէկուան այս տեղ գրուած խօսքերը : Աշակերտները կ'ուզե՞ն առնել իրենց Սուրբ Գիրքերը և կարդալ ինչ որ գրուած է հոս երէկուան խօսքերուն տեղը : Վարժուհին թումիկին գրած խոստովանութեան տեղը դրած էր Եսայեայ ԽԳ . 23 համարը :

Շուտով բացուեցան Սուրբ Գիրքերը, և այդ նշանակուած տեղը կարդացին աշակերտները լռութեամբ, և շատեր իրենց աչքերը դէպ ի վարժուհիին գրասեղանը դարձուցին : «Եթէ հրաման կու տար, վարժուհի, ամէնքս միաբերան կարդանք :” ըսաւ աշակերտներէն մէկը :

Եւ ամէնքը մեծ ապէս զգածուած կարդացին սա գեղեցիկ խօսքերը .

«Ես եմ՝ ես եմ, որ քու յանցանքներդ ինձի համար կը ջնջեմ, ու քու մեղքերդ ալ պիտի չլիչեմ :”

—>>>00<<<—



ժուհիին գրասեղանին ետևը թումիկ գրեց : Սրահը շատ հանդարտ էր երբ թումիկ կը գրէր : Կրնայիք ըսել ժամացոյցին Ի՛նչ Ի՛նչը : թումիկ աւելի շփոթեցաւ այն անտոյր լռութենէն և չէր կրնար յիշել թէ բառերն ինչպէս հեգեղու էր : Կեցաւ բառի մը առջև, և վարժուհիին երեսը նայելով ըսաւ . «Գա՛մ ձայնով, «ի՞նչպէս կը հեգուի ի՛նչ յա՛նչ բառը :” թումիկ երբեք պիտի չմոռնայ այդ բառը հեգեղու կերպը :

վարուիք և բան մը պիտի չըսէք այն պիտի մէկու մը որ այնքան աղնուաբար խոստովանեցաւ իր յանցանքը :” թումիկի գրածը բոլոր ցերեկը մնաց սև տախտակին վրայ : թումիկ զայն կը տեսնէր ամէն անգամ որ վեր կը նստէր և շատ անգամ նաև երբ վեր չէր նայեր, և կը խորհէր, «Ո՛հ, երանի՜ թէ չգործէի այդ յանցանքը : Ո՛հ թէ կարող ըլլայի աւրել այդ ատելի բաները :”

ՄԱԹԱՊԵԼՆԵՐԸ

Լրագիրները հիմա կը գրեն այն պատերազմին վրայ որ Անգղիացիք կ'ընեն Մաթապէլներուն հետ Հարաւային Ափրիկէի մէջ : Ո՛վ են Մաթապէլները, որոնց պատկերները կը տեսնուին հոս :

Ներկայ դարու սկիզբները Չաքի անուն պատերազմասէր ցեղապետ մը Չուլուի թագաւորութիւնը հիմնեց նուաճելով բոլոր դրացի ցեղերը : Իր ամենէն յաջող զօրավարն էր Ումիլիլիքազի, որ յետոյ ուզեց ինք թագաւոր ըլլալ : Չաքիի հետ մեծ ճակատամարտ մը մղելէն ետքը իր զօրքերուն հետ դարձաւ դէպ հիւսիս և շատ մը տեղ ճամբորդելէն ետքը Մաթապէլներուն նոր թագաւորութիւնը հիմնեց : Այդ կողմը դասուող ցեղերէն ո՛չ մէկը կարող էր անոր դէմ գնելու : Ումիլիքազի իր վարչութեան մէջ մեծ անգթութիւններ գործեց : Անոր որդին և յաջորդն էր Լուպէնկուլա որ երկու տարի առաջ մեռաւ : Անգղիացոց հետ անյաջող պատերազմ մը ընելէն ետքը : Պատերազմը ծագեցաւ Մաթապէլներու մէջ ոսկեհանքերու

գտնուելուն և ոսկի փնտռող Անգղիացի գաղթականներու և բնիկներուն մէջտեղ պատահած կռիւներուն պատճառաւ: Լոպանկուլա տրեան ծարաւի մարդ մըն էր, և իր եղբայրներէն ու թիւնը հոգի և ուրիշ շատ մը անմեղներ սպաննեց բուն իր ձեռքով: Մաթապէշները թէպէտ երկու տարի առաջ նուաճուեցան, սակայն Լոպանկուլայի որդին թագաւոր հռչակեցին, ապրտամբեցան Անգղիացուոյ դէմ, և երկրին մէջ զրուած սպիտակամորթ գաղթականներէն իբր 300 հոգի սպաննեցին: Մաթապէշներուն ցեղը թերևս 40,000 է աւելի չէլեր, բայց ուրիշ ցեղեր միացած են ապատարներու համար: Մաթապէշները շատ կը հաւա-

սարակ է հոս, անձանթ է Անգղիոյ մէջ, և հաւանականապէս հոս շուտով անոնց պիտի յաջորդեն կառքերը եթէ ամէն տեղ աղուոր ճամբաներ չինուին: Լոնտոնի մէջ ծախուած էջերէն շատը իւրանտայէ կու գան, ուր կը գտնուին 200,000 է աւելի, որոնց գրեթէ բոլորը երկրագործութեան համար կը գործածուին: Խաաիա Եւրոպական ուրիշ որ և իցէ երկրէ մը աւելի էջեր ունի, այսինքն՝ իբր 700,000, մինչ Գաղղիա ունի 400,000: Կ'ըսուի թէ Միացեալ Նահանգաց մէջ 2,500,000 էջ և ջորի կը գտնուի: Էջը աղնիւ և օգտակար կենդանի մըն է հակառակ իր զուարուն, և փափաքելի է տեսնել Օսմանեան Պետութեան մէջ կատարուած վտահայտի հաշիւ մը թէ քանի հատ կը գտնուի հոս այդ կենդանիէն:

մը որ կը դատապարտուի խաւարի մէջ և հաւանականապէս մուրացկանութիւնով ապրելու: Անոր կ'առաջարկուի ձրի վիրարութեան գործողութիւն որ հաւանականապէս պիտի տայ անոր աչաց տեսողութիւն և պիտի կարողացնէ զանկա վայելել կեանքի բոլոր հաճոյքները որոնցմէ բոլորովին զրկուած են կոյրերը: Այնպէս մը կ'երևի թէ այդ ծնողքը խենթ ըլլալու են որ կը մերժեն այսպիսի մարդասիրական առաջարկութիւն մը:

Բայց ասոր պատճառը կայ: Չինաստանի մէջ կոյրերը այնպիսի արտոնութիւններ կամ առաւելութիւններ կը վայելին որոնք չեն վայելեր աչքի տեսողութիւն ունեցողները: Ունէ փայլուն և սրամիտ մէկը, եթէ կոյր է, գիտէ թէ աղուոր ապրուստ մը ապահովուած է իրեն՝ բաղդ նախով: Վասն զի Չինացիք կը հաւատան թէ կոյրերը իրենց աչքին լոյսը կորսնցնելուն փոխարէն տեսակ մը ներքին լոյս ունին: Այս է պատճառը որ կոյրերը Չինաստանի մէջ ամէն տեղ պատուաւոր են և «Սուսցի» կը կոչուին, և մինչև անգամ խեղճ կոյր մուրացկանները աւելի յաջողութիւն կ'ունենան քան կաղերը և ուրիշ պակասաւորները:

Չինացուոյ տասնէն իննին համար ամենէն մեծ խնդիրն է ապրուստ ճարելը: Ուստի զարմանալի չէ որ յիշեալ պատանիին ծնողքը փոխանակ անոր կարեկցելու և կամ փափաքելու որ նա կարող ըլլայ իր մերձաւորներուն և ազգականներուն երեսը տեսնել, կը մտածէին թէ տղան մէկ տարուան մէջ ինչպէս աւելի ստակ կրնայ շահիլ, կ'որ ըլլալով թէ տեսնող աչք ունենալով:

ՇԻՏԱԿ ԵՐԿՐԱԳՈՐԾՐ

Օր մը երկրագործ մը գետի մը քովը ծառ կը կտրէր: Այնպէս մը պատահեցաւ որ կացինը սահեցաւ փախաւ ձեռքէն և ջուրը ինկաւ: Անշուշտ անմիջապէս ջուրին տակը գնաց: Խեղճ մարդը ինչ ընելիքը չգիտցաւ: Գետը խորունկ էր, և ինք չէր կրնար լողալ:

Մինչ կը ջանար կերպ մը գտնել զայն հանելու, ջուրի յաւերժահարս մը եկաւ գետէն և անոր ցաւին պատճառը հարցուց:

«Ո՛հ», ըսաւ մարդը, «կացինս գետին մէջ կորսնցուցի, և ջուրը այնչափ խորունկ է որ չեմ համարձակիր մէջը մտնել զայն հանելու:»



տան կախարդութեան, և շատեր կը սպաննուին ուրիշները կախարդած ըլլալու յանցանքը դուրեւով իրենց վրայ: Կը հաւատան թագաւորին և անձրևի բժշկներուն կարողութեանը թէ կըրնան անձրև բերել: Ինչպէս որ է շատ ուրիշ վայրենիներու մէջ, Մաթապէշ էրիկ մարդիկ պատերազմիկներ են, մինչ գործին մեծ մասը կիները կ'ընեն. անոնք կը մշակեն հողը, կը կտրեն և տուն կը բերեն վառելու փայտը:

ԵՇԵՐՈՒ ՎԱՃԱՌԱՆՈՑ

Վերիպատկերը կը ներկայացնէ էջերու վաճառանոցը Լոնտոնի Ալլինկլըն արուարձանին մէջ: Կ'ըսուի թէ անցեալ տարի հոն իբր 3,000 էջեր ծախուեցան, իբր ութ Օամ. ոսկի միջին գնով: Ոմանք կ'ըսեն երեսուն ոսկիէն աւելի: Անոնք կը գործածուին թէ՛ փոքր կառքեր քաշելու և թէ՛ հեծնելու համար: Բեռան համետը («Կեթ») որ այնքան հա-

ԿՈՅՐ ԲԱՂԻ ՆԱՅՈՂՆԵՐ

Չինաստանի միսիոնար մը սա պատմութիւնը կ'ընէ.

«Բանի մը շարաթ առաջ կոյր տղայ մը եկաւ մեր հիւանդանոցը իր մէկ հիւանդութեան դարման գտնելու համար: Բժիշկը տուաւ դեղը և յետոյ հարցուց թէ չէ՞ր ուզեր իր կուրութեան բժշկուիլ, վասն զի տեսաւ որ տղան ստուերած (քեթ) ունէր երկու աչքին մէջ ալ: Բնականապէս տղան կ'ուզէր բժշկուիլ, բայց Չինացուոյ վրայ կանուխ տեսնուած խոհականութիւնով մը, ըսաւ թէ պիտի հարցնէ տունը: Գնաց և երեք շորս օրէն եկաւ և ըսաւ թէ ծնողքը խօսեցան այդ բանին վրայ և որոշեցին որ իրեն օգտակար պիտի ըլլայ կոյր մնալը:

Սրբամտեան ժողովուրդներուն մէջ գրեթէ անկարելի բան է որ այսպիսի անգութներ գտնուին: Ահա տասնը վեց տարեկան փայլուն և մտացի տղայ

Յաւերժահարսը (որ, կիւսերուն պէս, կրնար ուզածը ընել) գետը ցատկեց, և հանեց համակ ոսկիէ կացին մը: «Քու կացինդ է ասիկա», հարցուց յաւերժահարսը:

«Չէ», պատասխան տուաւ մարդը, «իմ կացինս ասոր արժէքին չմտնեմ, նոր անգամ: Հին կացին մըն է իմն, երկաթէ և պողպատէ շինուած, փայտէ կոթով»:

Նորէն սուղեցաւ յաւերժահարսը, և հանեց արծաթէ կացին մը: «Ստիկա իմն չէ», ըսաւ մարդը: «Իմ կորսնցուցածէս շատ մը աղէկ է»:

Երրորդ անգամ սուղելով յաւերժահարսը հանեց մարդուն բուն կացինը: «Ո՛հ, ատիկա է իմն», ըսաւ մարդը: «Ի՛նչ վճարեմ քեզի, կացինս հանելուդ համար»: «Քեզմէ բան մը չեմ պահանջեր», ըսաւ յաւերժահարսը. «բայց քու շիտակութեանդ համար քեզի կու տամ ոսկիէ ու արծաթէ կացիններն ալ»:

Երբ մարդը տուն գնաց իր երեք կացիններով, բարեկամներուն ըսաւ թէ ինտոր ստացաւ այդ կացինները:

«՛հ,» ըսաւ իր բարեկամներէն մին, «ըսած եմ թէ շիտակութիւնը լաւագոյն ընթացքն է: Նայինք կրնամ ոսկիէ կացին մը ձեռք բերել: Ա՛յ ուրիշ բան չեմ ուզեր»: Ասիկա ըսելով նոյն տեղը գնաց, և սկսաւ ծառ կտրել:

Երկու երեք վայրիեանէն իր կացինը սահեցուց ձեռքէն և գետը նետեց: Ապա նստաւ և սկսաւ ինքիւրէն ըսել միւս մարդուն պէս, «Ո՛հ, կացինս, կացինս»:

Յայնժամ նոյն յաւերժահարսը (որ գետին այդ մասին մէջ կը բնակէր) իրեն եկաւ, և ըսաւ, «Ի՛նչ կայ, մարդ»: «Ո՛հ», ըսաւ մարդը, «կացինս գետը ինկաւ, և կը վախճամ որ ա՛լ չկրնամ ձեռք բերել զայն»:


«Իս կ'առնեմ քեզի կու տամ», ըսաւ յաւերժահարսը, և գետը սուղեցաւ: Քիչ մը ետքը ջուրէն ելաւ զուտ ոսկի կացին մը ձեռքը: «Իմն է», ըսաւ մարդը, որովհետեւ չէր կրնար համբերել:

«Ո՛չ», ըսաւ յաւերժահարսը. «աստիկա է՛ն է: Միշտ ես ծառ կը կտրեմ ջուրին տակը երբ մէկը ծառ կը կտրէ վերը գետեզերքը»:

«Եթէ նայիս յստակ ջուրին մէջ գետեզերքը ծառ մը ինկած ատեն, պիտի տեսնես որ ուրիշ ծառ մըն ալ ջուրին մէջէն փչ կ'իջնայ: Աստիկա իմ կտրած ծառս է, և այս կացինը կը գործածեմ»:

«Բայց բարեկամիս ոսկիէ և արծաթէ կացիններ տուիր», ըսաւ մարդը, «և իմն ալ»: «Տուի որովհետեւ բարեկամդ շիտակ մարդ էր», ըսաւ յաւերժահարսը: «Գուն ջանացիր ինձի կարծել տալ թէ շիտակ մարդ ես, սակայն չես»:

«Այս կացինը չեմ տար քեզի, և պիտի չհանեմ քու գետը նետած կացինդ»:



ՁԻՈՒ ՄԸ ՄԻՋՈՑՈՎ ԱԶՍՏՈՒԱԾ

Հիւսիսային արևմտեան մեծ փոթորիկին օրն էր 1888 Յունուար տասներկու քը: Առաւօտը միգապատ և խոնար էր և տաք՝ մինչև կէս օր մօտ, երբ յանկարծ օդը ցրտեց և հիւսիսային արևմուտքէն հովը ելաւ որ նախորդ օրուան իջած ձիւնը օդը կը հանէր խոշոր գանգուածներով:

Մը. Պ. ձին հեծաւ մէկ մղոն հեռի տեղ մը երթալու և շուտով ետ դառնալու համար: Երբ բակէն դուրս ելաւ, փոքրիկ քուռակ մը հետեւեցաւ իրեն բայց Մը. Պ. չտեսաւ զայն, սակայն տեսաւ էտի իր վեց տարեկան մանչը: Էտի քուռակին ետեւէն վազեց, յուսալով ետ բերել զայն շուտով: Բայց ճիշդ այդ ատեն փոթորիկը ելաւ: Ձիւնը ստակալի կերպով կը պտուտէր օդին մէջ և կը լեցնէր ամէն կողմ այնպէս որ անկարելի էր բան մը տեսնել ձեռք հասնելու չափ հեռաւորութեան մէջ, և էտի կորսուեցաւ: Մայրը երբ տեսաւ որ տղան իր քովը չէ, դուռը վազեց և բոլոր ուժովը կը կանչէր. բայց փոթորիկին ձայնը ամէն ձայն անլսելի կ'ընէր, և կինը չէր համարձակեր դուռէն դուրս ելլել:

Նոյն ժամանակը Մը. Պ. գործը աւարտած ըլլալով ետ կը դառնար, բայց հասկցաւ որ պէտք էր բոլորովին իր ծեր Շէտին (ձիւն) վտահիլ տուն երթալու համար, վասն զի փոթորիկը այնպէս անկարող ըրած էր զինք բուրսիքը եղածները տեսնել և այնպէս շփոթեցուցած էր որ ինքնիրեն չէր կրնար ճամբան հանել: Ճամբուն կէտը կը գտնուէին և մինչև հոն Շէտի քաջապէս առաջ քայլած էր, բայց այնուհետև կենդանին սկսաւ կամաց չարժիլ և կենալ, թէպէտ տիրոջը շատ ստիպումներուն վրայ յառաջ քայլեց մինչև որ հասաւ իր ախոռին մօտ: Հոն բոլորովին կեցաւ և, հակառակ իր վրայ հեծնողին բոլոր ջանքերուն, ետ դարձաւ և սկսաւ նորէն փոթորիկին մէջ երթալ:

Մը. Պ. զարմացած մնաց և դադարեցնելով ձին զսպելու ջանքերը, թող տուաւ որ կենդանին երթայ ուր որ կ'ուզէ: Ձին նորէն իր ճամբան բռնեց դէպ ի ետ. արագ արագ և ուժով կ'առնէր քայլերը. եկաւ կայնեցաւ պարագայ հիւղակի մը քով ուր Մը. Պ. զարմացմամբ ցուրտին և ձիւնին մէջ կծկտած գտաւ իր զաւակը էտին որ սղորմագին կու լար: Անմիջապէս ձեռունի Շէտին կ'առնակը դրաւ տղան,

արագ արագ տուն գոցին, և էտի իր գրեթէ խելքը կորսնցուցած մօր բազուկներուն մէջ դրուեցաւ:

Թերևս աւելորդ է ըսել թէ ծեր ձին ինչպէս սիրելի եղաւ յիշեալ ընտանիքին. և թէ ինչպէս կը գուրգուրային անոր վրայ: Երբ զինք տեսայ, հանգարատքէն կ'արածէր կանաչ բլուրի կողին վրայ Հարաւային Տաքթայի մէջ, իր զարմանալի մեծագործութեան տեղին մօտ:

ԻՆՉ ԽՈՐՀԵՆՈՒ ԵՆՔ

Խորհուրդները թէ՛ խօսքերու կառավարողներն թէ՛ գործերու: Եթէ խորհուրդները ուղիղ ըլլան, խօսքերը ու գործերը ծուռ չեն ըլլար: Եթէ խորհուրդները ծուռ ըլլան, գործերը ուղիղ չեն ըլլար:

Կան մարդիկ որ կը կարծեն թէ իրենց ուզածը կրնան խորհիլ եթէ չեն խօսիր և չեն գործեր: Բայց կը սխալին. իրենց խորհուրդները գործերու կ'առաջնորդեն, և գործերը կը յայտնեն խորհուրդներուն ինչ ըլլալը:

Կան շատեր որ ունին այնպիսի խորհուրդներ, զորոնք չեն համարձակիր խօսիլ, և չեն ուզեր խօստովանիլ իրենց ամենասիրելի բարեկամներուն անգամ: Կ'ամենան իրենց խորհուրդներուն ծանուցուեցին: Եւ սակայն եթէ այդ խորհուրդներուն վրայ որո՞ճան և զանոնք գործադրեն, անոնք ուրիշներուն կը ծանօթացուին և իրենց ամենարուն և ցաւերուն պատճառ կ'ըլլան: Եթէ ատոնց խորհուրդները ուղիղ ըլլային, գործերը ծուռ պիտի չըլլային: Եթէ խորհուրդները մաքուր ըլլային, գործերը պիտի պիտի չըլլային:

Շատ բաներ կան որոնց վրայ խորհելէն ետև կրնան խօսուիլ: Կան խորհուրդներ, որոնք մարդիկ կը ջանան ծածկել: Որո՞նք են ամենէն աղէկ և ապահով խորհուրդները:

Մեծ առաքեալը Պողոս մեզի խորհուրդի նիւթերու ընդարձակ ցանկ մը կու տայ: Եթէ որոնք օգտակար են և չեն փաստակար, և որոնց վրայ խորհելով մեզի աղէկ կ'ըլլայ և ոչ երբեք գէշ: Ասով մեզի կը պատուիրէ մեր խորհուրդները կառավարել:

«Վերջապէս, եղբայրներ, ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ առաքելութիւն և ինչ գովութիւն որ կայ, անբաները խորհեցէք» փիլ. Դ. 8.

Ամերիկայի Մեթոնարաւորներու Մարտոնատեր

Տնօրէն—Սթիւարտ

Ֆինանսներու Եղբայրներու Մարտոնատեր

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴԱՆԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌԱ ՊՈՅԱՆԵԱՆ